ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Ք. Սևան

14.09.2018թ.
Ժամը 11:30

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան

Անդամներ՝ Վարդուհի Վարդանյան

Մարիաննա Առաքելյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(Մ. Սիմոնյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
2.1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին:
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.
(Մ. Սիմոնյան)

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 07.09.2018թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **<<Ռասսի>> ՍՊԸ-ի, <<Քինգ Մանչ>> ՍՊԸ-ի և <<Լենտեքս>> ՍՊԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն

առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի **<<Ռասսի>> ՍՊԸ-ն և <<Լենտեքս>> ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն, իսկ **<<Քինգ Մանչ>> ՍՊԸ-ն** վերը նշված տեղեկատվության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի **2000 ՀՀ դրամ** ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով **<<Քինգ Մանչ>> ՍՊԸ**-ի հայտը **մերժել**:

Նկատի ունենալով, որ 21-րդ և 22-րդ չափաբաժիններով միայն **<<Քինգ Մանչ>> ՍՊԸ**-ն էր հայտ ներկայացրել, որի հայտն էլ մերժվել է, ուսի հանձնաժողովը ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նշված չափաբաժինների ընթացակարգը հայտարարում է չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.

(Մ. Սիմոնյան)

2.1 ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին **<<Ռասսի>> ՍՊԸ-ն և <<Լենտեքս>> ՍՊԸ-ն** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

<<Ռասսի>> ՍՊԸ-ի և <<Լենտեքս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 3/ համապատասխանում է սույն հրավերի պահանջներին:

<<Քինգ Մանչ>> ՍՊԸ-ն հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը չի ներկայացրել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Սիմոնյան)

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:
(Մ. Սիմոնյան)

4.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝

<<Ռասսի>> ՍՊԸ-ին-2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7դ, 8-դ, 9-դ, 10-դ, 18-դ, 19-դ և 20-դ. չափաբաժիններով

<<Լենտեքս>> ՍՊԸ-ին-14-դ, 15-դ, 16-դ և 17-դ չափաբաժիններով

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝		Մ. Սիմոնյան
Անդամներ՝		Վ. Վարդանյան
		Մ. Առաքելյան
Գնումների համակարգող՝		Լ. Դավթյան